ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

31.03.2023թ.

ՈՐՈՇՈՒՄ 270-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ 111,7ՔՄ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշման 1-ին կետով, և հաշվի առնելով Գորիս քաղաքի բնակիչ Քնարիկ Բալասանյանի 2023 թվականի մարտի 28-ի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Մաշտոցի փողոցի թիվ 8 հասցեում գտնվող 09-003-0111-0010 կադաստրային ծածկագրով հողամասի վրա առկա վարչական շենքի 2-րդ հարկից 111,7քմ գործառնական նշանակությունը փոխել բնակելի գործառնական նշանակության՝ որպես բնակելի տուն:
2. Սույն որոշումն ենթակա է գույքային իրավունքների պետական գրանցման:

ԱՐՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2023/31/03
Ք.Գորիս